ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-7/60-1

ք. Երևան 20 .06. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մեդիսար» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Գաբրիելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել.

3.1.8 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 426 500 (չորս հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ամսում,/ եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցներ նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 10.12.2017թ:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և

Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Մեդիսար» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Գետառի-4/9
աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 900011144079	հ/հ 2050022415811001
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02555635
ՀՀ արդարադատության նախարարության	
ՆՏԱ գործարարությունների պետական ՊԺԿ	Տնօրեն
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

AK 0551760

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-7/60-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Ապրանքի անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
1	Պեպտոն /ֆերմենտատիվ/	ԳՕՍՏ 13805-76-ին համարժեք: Փաթեթավորումը՝ 0,25-1,0 կգ-ոց պլաստմասե փակ տարայով: Պիտանելիության ժամկետը 2 տարուց ոչ պակաս, մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
2	Արեոմետր	ԳՕՍՏ 18481-81 համապատասխան, հեղուկ նյութերի խտությունը որոշելու համար: Արեոմետրները լինեն չօգտագործված վիճակում, ստվարաթղթե փաթեթավորմամբ: Չափման սխալանք՝ ոչ ավել 1 կգ/ մ³ АОН-1 (ареометр общего назначения) հավաքածու: Խտության չափման տիրույթները՝ 700-ից 1840 կգ/ մ³ ներառյալ: Փաթեթավորումը՝ փայտե տուփում 19 հատ խտաչափ հետևյալ չափման տիրույթներով՝ 700-760, 760- 820, 820-880, 880-940, 940-1000, 1000-1060, 1060-1120, 1120-1180, 1180-1240, 1240-1300, 1300-1360, 1360-1420, 1420-1480, 1480-1540, 1540-1600 , 1600-1660, 1660-1720, 1720-1780 և 1780-1840 ներառյալ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
3	Բուտիրոմետր	Բուտիրոմետր՝ յուղի 1-6 նիշանոց, համարժեք ԳՕՍՏ 23094-78 -ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
4	Բուտիրոմետր	Բուտիրոմետր՝ յուղի 40 նիշանոց, համարժեք ԳՕՍՏ 23094-78-ին, լինի չօգտագործված վիճակում ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 5 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
5	Խցան	Բուտիրոմետրի խցան՝ երկողմանի, ՏՊ 38-105-1058 համապատասխան, լինի չօգտագործված վիճակում, ստվարաթղթե տուփերով, տուփում 20 հատ: Մատակարարման պահին մատակարարի կողմից ներկայացվի որակի հավաստող փաստաթուղթ:
6	Գլան	(Цилиндр) 100մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍՏ 1770-74-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 5 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
7	Գլան	(Цилиндр) 50մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍՏ 1770-74-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 5 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
8	Գլան	(Цилиндр) 25մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍՏ 1770-74-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 5 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
9	Կոնաձև կոլբա	250 մլ տարողությամբ, շլիֆի չափը 29/32 և ունենա ապակյա խցան, համարժեք ԳՕՍՏ 25336-82-ին, լինի չօգտագործված վիճակում, , փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
10	Կոնաձև կոլբա	100 մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍՏ 25336-82-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարի կողմից ներկայացվի որակի հավաստող փաստաթուղթ:
11	Կոնաձև կոլբա	500 մլ տարողությամբ, շլիֆի չափը 24/26 և ունենա ապակյա խցան, համարժեք ԳՕՍՏ 25336-82-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
12	Կոնաձև կոլբա	250 մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍՏ 25336-82-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
13	Կոնաձև կոլբա	100 մլ տարողությամբ, շլիֆի չափը 19/26 և ունենա ապակյա խցան,համարժեք ԳՕՍՏ 25336-82-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարի կողմից ներկայացվի որակի հավաստող փաստաթուղթ:

14	Չափիչ կոլբա	50 մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍ 1770-74-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
15	Չափիչ կոլբա	100 մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍ 1770-74-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
16	Հարթահատակ կոլբա	250 մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍ 1770-74-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
17	Բաժակ	100 մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍ 25336-82-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
18	Բաժակ	150 մլ տարողությամբ, համարժեք ԳՕՍ 25336-82-ին, լինի չօգտագործված վիճակում, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
19	Տիգել բարձր № 4	Համապատասխան ԳՕՍ 9147-80: Հաղճապակյա, կոտրվող, ջերմակայուն, լինի չօգտագործված, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
20	Տիգել բարձր № 5	Համապատասխան ԳՕՍ 9147-80: Հաղճապակյա, կոտրվող, ջերմակայուն, լինի չօգտագործված, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, տուփում 10 հատ: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
21	Լաբորատոր ձեռնոցներ	Համարժեք ԳՕՍ Ռ 52238-2004 -ին: Լաբորատոր ձեռնոցները լինեն լատեքսից, փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, տուփում 100 հատ, չափսի՝ 6,5-7,5 : Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:
22	Ձեռքի էլեկտրոնային խոնավաչափ	ԻՍՕ 9001:2008 համապատասխան: Որոշում է՝ հարաբերական խոնավությունը և ջերմաստիճանը, Թվային էկրանով Աշխատում է՝ - 10°C-ից 60 °C ±0,5% տիրույթում Անվտանգության հավաստագրերի առկայություն: Արտադրանքը պետք է ունենա որակի հավաստագիր, օգտագործման ուղեցույց և երաշխիք ոչ պակաս քան 1 տարի: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթ:

Ծանոթություն Մատակարարման վայրը՝ ք. Երևանի անասնաբուժահամաճարակային առանձին ջոկատի պահեստ՝ Արշակունյաց 73ա:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001144079
ՀՎՀՀ 00862415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ ղեկավարության պահ. ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիսար» ՍՊԸ
ք. Երևան, Գետառի-4/9
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ 02555635

Տնօրեն

AK055 1760

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-7/60-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

№	Անվանումը	Չ/Մ	Քանակը	Ապրանքի մատակարարումը ըստ ամիսների 2017թ		Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/
				հուլիս	օգոստոս		
1	Պեպտոն /ֆերմենտատիվ/	կգ	1		1	15000	15000
2	Արեոմետր	հավաքածու	2		2	47000	94000
3	Բուտիրոմետր	հատ	20		20	3700	74000
4	Բուտիրոմետր	հատ	5		5	3800	19000
5	Խցան	հատ	20		20	100	2000
6	Գլան	հատ	5		5	700	3500
7	Գլան	հատ	5		5	600	3000
8	Գլան	հատ	5		5	500	2500
9	Կոնաձև կոլբա	հատ	20		20	1100	22000
10	Կոնաձև կոլբա	հատ	20		20	500	10000
11	Կոնաձև կոլբա	հատ	10		10	1600	16000
12	Կոնաձև կոլբա	հատ	20		20	600	12000
13	Կոնաձև կոլբա	հատ	20		20	750	15000
14	Չափիչ կոլբա	հատ	10		10	750	7500
15	Չափիչ կոլբա	հատ	20		20	850	17000
16	Հարթահատակ կոլբա	հատ	20		20	700	14000
17	Բաժակ	հատ	20		20	400	8000
18	Բաժակ	հատ	20		20	450	9000
19	Տիգել բարձր № 4	հատ	10		10	650	6500
20	Տիգել բարձր № 5	հատ	10		10	750	7500
21	Լաբորատոր ձեռնոցներ	տուփ	15	15		3000	45000
22	Ձեռքի էլեկտրոնային խոնավաչափ	հատ	2		2	12000	24000
Ընդամենը 426 500 (չորս հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ							

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիսար» ՍՊԸ
ք. Երևան, Գետառի-4/9
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ 02555635

Տնօրեն

Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

AK0551760

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-7/60-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV դասակարգումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ*					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Պեպտոն /ֆերմենտատիվ/	24951480/1/4/3		15000	15000	15000	15000	15000
2	Արեոմետր	38411100/1/4/4		94000	94000	94000	94000	94000
3	Բուտիրոմետր	33791300/1/4/2		74000	74000	74000	74000	74000
4	Բուտիրոմետր	33791300/2/4/2		19000	19000	19000	19000	19000
5	Խցան	44611450/1/4/2		2000	2000	2000	2000	2000
6	Գլան	33791300/4/4/2		3500	3500	3500	3500	3500
7	Գլան	33791300/5/4/2		3000	3000	3000	3000	3000
8	Գլան	33791300/6/4/2		2500	2500	2500	2500	2500
9	Կոնաձև կոլբա	33791300/9/4/2		22000	22000	22000	22000	22000
10	Կոնաձև կոլբա	33791300/10/4/2		10000	10000	10000	10000	10000
11	Կոնաձև կոլբա	33791300/11/4/2		16000	16000	16000	16000	16000
12	Կոնաձև կոլբա	33791300/12/4/2		12000	12000	12000	12000	12000
13	Կոնաձև կոլբա	33791300/13/4/2		15000	15000	15000	15000	15000
14	Չափիչ կոլբա	33791300/14/4/2		7500	7500	7500	7500	7500
15	Չափիչ կոլբա	33791300/15/4/2		17000	17000	17000	17000	17000
16	Հարթահատակ կոլբա	33791300/16/4/2		14000	14000	14000	14000	14000
17	Բաժակ	33791300/17/4/2		8000	8000	8000	8000	8000
18	Բաժակ	33791300/18/4/2		9000	9000	9000	9000	9000
19	Տիգել բարձր № 4	33791300/20/4/2		6500	6500	6500	6500	6500
20	Տիգել բարձր № 5	33791300/21/4/2		7500	7500	7500	7500	7500
21	Լաբորատոր ձեռնոցներ	33141156/1/4/5	45000	45000	45000	45000	45000	45000
22	Ձեռքի էլեկտրոնային խոնավաչափ	38411400/1/4/2		24000	24000	24000	24000	24000

- *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գլխավոր հանձնարարական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի Պ.Ժ.

Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիսար» ՍՊԸ
ք. Երևան, Գետառի-4/9
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ 02555635

Տնօրեն

Լ. Ս. Ազատեցյան

ԱԿ055 1760

Ս. ՊԱՊՈՅԵԼՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-7/60-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-7/60-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն